ԶԻՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զուիցերիայի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿՐՏ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆԻ

(ՆարուՆակութիւն և վերջ [1])

Կանտոնական դատարաններին է պատկանում դատաստանական իշխանութիւնը։ Քաղաքացիական թեթև գործերը վճռում է հաշտարար դատաւորը։ Քաղաքացիական ատեանը բաժանւած է. քաղաքացիական գործերի համար կայ առանձին ատեան. իսկ վճռաբեկանական գործերի համար կայ վճռականական ատեան։ Ատեանը վճռաջինջ չէ։ Քրէական գործերը քննւում են լատուկ քննիչի միջոցով. քաղաքացիական ատեանը քրէական գործերի քննող նիստն է կազմում (chambres d'instruction)։ Ցանցանքները (délits) դատւում են ուղղիչ նիստերում (assises correctionnelles). իսկ ոճիրները (crime) քրէական նիստերում (assises criminelles)։

Բողոքները ներկայացնում են վճռաջինջ ատեանին (cour de cassation)։

Կանտոնը ունի մի ընդհանուր պրոկուրոր (procureur général) երկու օգնականներով. դատարաններում գործերը կատարւում են բաց դռնով (հրապարակով)։ Քրէական լանցանքների համար ատեանը կազմւում է ժողովրդից անմիջապէս ընտրւած երդւեալներից, ոճիրների համար 12 հոգուց, իսկ քրէական թեթև լանցանքների համար 6 հոգուց։ Երդւեալները կարող չեն լինել դատաստանական ծառայողները, պետական խորհրդի անդամները և ոչ էլ եկեղեցականները։

Քրէական ատեանը ասացի, որ բաց դռնով է նիստ ունենում։ Ամեն

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 9 և 10։

ոք իրաւունք ունի ներկայ գտնելու նիստերին. լանցաւորը ունի պաշտոնական մի փաստաբան, եթէ նա չի որոշում առանձին մի խորհուրդատու։ Ատեանի նախագահը հարցաքննում է լանցաւորին և վկաներին։ Վկաներին հարց տալ կարող է լանցաւորը կամ իւր խորհրդատուն նախագահի միջոցով։ Հարցեր առաջարկել կարող են թէ լանցաւորին և թէ վկաներին երդեւալները և պրոկուրորը։ Նախապէս խօսք խնդրելով նախագահից, լանցաւորը կամ իւր փաստաբանը պաշտպանութեան և ընդդէմ պատասխաններից յետոյ իրաւունք ունեն կրկին խօսք պահանջելու։ Պայքարից յետոյ նախագահը ձևակերպում է այն հարցերը, որ պէտք է վճռեն երդեւալները։ Թէ պրոկուրորը և թէ փաստաբանը կարող են իրանց նկատողութիւնները անել այդ վերաբերութեամբ, որից յետոյ նախագահը ամփոփում է լանցաւորի թեր և դէմ բերած ապացոյցները և առաջարկում երդեւալներին։ Երդեւալները՝ ժողովրդի՝ անմիջական ներկայացուցիչները, առանձնանալով վճռում են ձայների առաւելութիւնով։ Եթէ նախագահը բաւական չէ համում երդեւալների տուած վճռից, ապա գործը առաջարկւում է այլ երդեւալների որոնց վճիռը վերջնական է։

Անմիջական ռամկական կազմութիւն ունին, ինչպէս լիշեցի, Գլարիս, Ուրի, Ապպէնցել, արտաքին և ներքին Ռոդեր, Ունտերվալդէն (վերին և ստորին), որոնց սահմանադրութիւնները գրեթէ նոյնն են. այդ ինկատի առած, ես բաւականանում եմ սղելու Ապպէնցելի կիսականտոնների մէկի՝ ներքին Ռոդերի (Rhodes interieurs) սահմանադրութիւնը, որով դաղափար կարող է տալ և միւսների վերայ։

Ապպէնցելի արդի սահմանադրութիւնը գործադրւում է 1873 թւականի ապրիլի 27-ից։ Քաղաքական գլխաւոր օրդանը, մայիսեան ասած ժողովն է (Landsgemeinde)։

Կանտոնի բոլոր քաղաքացիները, որոնք ընտրողական և ընտրելու իրաւունք ունին (20 տարեկանից), ամեն տարի ապրիլի վերջին չաբաթում, համախմբելով կազմում են այդ ժողովը, որը արդարև կարելի է ազգային ժողով կոչել խօսքիս բուն նշանակութեամբ։ Այդ ժողովը կանտոնի բարձրագոյն իշխանութիւնն է։ Այդ ժողովում նա՝ ժողովուրդը, անմիջապէս ազատ և անկախ խղճով, արդարութեան և երկրի բարելաւութեան բուռն տենչանքով լցուած, արտայայտում է իւր կամքը։ Նախքան անցնելս նորա իրաւունքների թւելուն, ես աւելորդ չեմ համարում այստեղ թարգմանօրէն դնել տեղական լրագիրներից մէկի թղթակցի մի լուռածից մի փոքրիկ կտոր։

Ահա թէ ինչ կերպ է նա նկարագրում այդ ժողովը։

—« ...Բաց դաշտի վրայ ժողովուրդը համախմբւում էր հապճէպ։

—« Իւրաքանչիւրը հագել է իւր տօնական զգեստը. մոդ վարտիկ, « սև ֆրակ կամ լոդիկ (redingot) և գլխարկ. Մի քանիսը կողքից կա- « խել են սրերը. այլք ձեռներին ունեն... Ժամի 11-ին դաշտը վիտում էր

« արդէն խուռն բազմութիւնով։ Քաղաքացիներից մի խումբ ստիպուած էր
« տեղ բռնել մօտակայ հրապարակի վրայ, տախտակամածի (էստրադ) հան-
« դէպ։ Նախընթաց օրուայ վատ եղանակը արգելք էր եղել վաստառող-
« ներին և ծերունիներին ներկայ գտնուելու։ Ժողովրդի բազմութիւնը անց-
« նում էր 8 հազարից. իսկ լաւ եղանակներում, առհասարակ այդ թիւը
« 10,000-ից անցնում է։ Ժողովը բացուելուց մի քանի րոպէներ առաջ,
« երաժշտական խումբը բռնեց տախտակամածը։ Երաժշտապետի նշանով,
« խումբը ածում է «մայիսեան ժողովի մաղթանքը». ամբողջ բազմութիւնը
« երգակցում է երաժշտական խմբին ներդաշնակ։ Լուրջ դէմքով, խորա-
« սուզուած, ներդաշնակ երգում է իւրաքանչիւրը։ Աշխական երգի
« մի օրգինալն է այդ։ Զորս տուն երգելուց յետոյ, տիրեց մի տեսակ խո-
« րին լռութիւն, որի ներքոյ պաշտօնական կորտէժը ընթանում է և տեղ
« բռնում տախտակամածի վրայ (estrade)։

« Լանդամմանը (Landammann) աւաց գլխարկը. կարծես գիւթա-
« կան մի ուժով ընկան բոլոր գլխարկները և ահա ութ հազար հոգի բաց
« գլխով մնում են, համերաշխ զգացմունքով, ի պատիւ այն բարձր պաշ-
« տեային (magistıat), որին իրանք նշանակել են են և որը այդ րոպէին
« ներկայացնում էր հայրենիքն և օրէնքը։ Ամբողջ բազմութիւնը խորին
« ուշադրութիւնով լսում է ժողովի բացման հակիրճ և կարճ ճառը։ Ակա-
« դէմիական պերճախօսութիւնը բացակայ է։ Ատենաբանը վերջացնելով
« իւր խօսքը, հրաւիրում է ժողովին, խնդրել Աստծոյ օրհնութիւնը։ Կրկին
« խորին լռութիւն. ամենքը, առած գլխարկները, կենտրոնացել են մտա-
« ւոր աղօթքում։ Ամբողջ բազմութեան մէջ ոչ մի դէմք չէ նկատւում.
« տեսնւում է գանգերի և մազերի կոյտ սակայն այդ երկար չի տևում.
« մի քանի վայրկեանից, ամենքը գլուխները բարձրացրած գործի են պատ-
« րաստւում։ Հերթական առաջին գործը ֆինանսական վարչութեան տուած
« հաշւի համար ժողովրդի հաճութիւնը և հաստատութիւնն էր։ Ամենքն
« էլ յաչանի ձայն են տալիս ձեռները վեր բարձրացնելով, թէ դրական և
« թէ բացասական ձայնատւութեան համար...» [1]։

Ահա ընթերցող, զւիցերական մի լրագրի խօսքերը, բառացի թարգ-
մանելով [2]։

Այս ժողովին, ինչպէս պետութեան գլխաւոր իշխանութեան պատ-
կանում է՝ հաստատել և քննութեան ենթարկել սահմանադրու-
թիւնը։ Ժողովը միշտ կարող է մասնաւոր փոփոխութիւններ անել. իսկ
երբ կարիք եղաւ ընդհանուր վերաքննութեան, ապա նա նշանակում է

---

[1]) Le „Genévois" լրագրից։

[2]) Ունտերվալդէնի Մայիսեան ժողովական վարչութիւնը յայտնել է, որ անցեալ տարիների եկամուտը կը ծածկէ յաջորդ տարուայ պետական ի նկատի ունենալիք ծախսերը, այնպէս, որ այդ տարին ժողովուրդը ազատ է բոլոր հարկերից։

վերաքննող մի մասնաժողով, որը պրոէկտը ներկայացնում է լաջորդ ժողովին։ Այդ ժողովն է հաստատում կամ հերքում գաղնակցութեան սահմանադրութեան պրոէկտը։ Այդ ժողովում քաղաքացիները ընտրում են պարլամէնտի ազգային խորհրդի համար իրանց ներկայացուցիչը։

Ամեն մի քաղաքացի իրաւունք ունի պահանջելու սահմանադրութեան վերաքննութիւնը մասամբ կամ ամբողջովին. նա է մտցնում նոր հարկեր՝ անմիջական հարկերը։

Մալիսեան ժողովն է նշանակում երկրի բարձր պաշտօնեաներին և նրանց ռոճիկները որոշում։ Ամեն տարի այդ ժողովում [1]) նշանակւում է Պետական խորհուրդը. 2-դ, կանտոնական ատեանը, 3-դ, կանտոնի քաղաղուղարը և կանտոնի դռնապանը (Huissier) նա է հաստատում բնաշխարհութիւն (naturalisation) և ստանում է կանտոնի վարչական հաշիւները։ Մալիսեան ժողովը տարեկան մի անգամ կանոնաւոր հաւաքւում է ինչպէս լիշեցի ապրիլի վերջին շաբաթում. սակայն նա կարող է ժողովել և արտաքոյ կարգի։

Ժողովի ձայների մեծամասնութեամբ կայացրած վճիռը օրէնքի զօրութիւն է ստանում, որին պէտք է լարգեն բոլոր քաղաքացիները. սակայն ամեն ոք կարող է քննադատութեան ենթարկել ժողովին մասնակցել և ընտրել և թէ ընտրւել կարող են բոլոր քաղաքացիք 20 տարեկանից։ Զրկւում են միմիայն նրանք, որոնք դատապարտւած քրէական լանցանքով և կամ անւանարկւած են դատարանական վճիռով (վերջնական)։ Սնանկացածները կարող չեն ոչ ընտրւել և ոչ ընտրել։ Իւրաքանչիւր քաղաքացի ընտրող պարտաւոր է մասնակցել բոլոր ընդհանուր ժողովներին և ժողովներին որոնք տեղի կ'ունենան համաձայն սահմանադրութեան։ Իւրաքանչիւրը պէտք է ընդունէ այն պաշտօնը, որը տրւում է նրան սահմանադրութեան համաձայն, բացառութիւն կազմում են 65 տարեկանից անցած ծերունիները։ Մալիսեան ժողովում նախագահում է Լանդամմանը (Landammann). ներկայացուցչական ձեւի միւս իշխանութիւններն են 1-ին բարձր խորհուրդը, որը ընտրւում է Մալիսեան ժողովից և որին լանձնւած է օրինագիծներ կազմել և նշանակել մի քանի պաշտօնեաների։ Բարձր խորհուրդի անդամներին ընտրում են համալնքները 250 հոգուն մի ներկայացուցիչ տալով։ Խորհրդին նախագահում է Լանդամմանը։ Բարձր խորհուրդը առհասարակ հաւաքւում է տարեկան երեք անգամ։ Խորհրդին մասնակցում են նոյնպէս պետական խորհրդի անդամները։ Այդ խորհրդում բոլորքեան ներկայացնում են ամբողջ կանտոնը և ոչ այս կամ այն համալնքը, ուր ընտրւած են։ Նա, որպէս ասացինք օրինագիծներ է կազմում, բայց եթէ անկետաձգելի կարիք կալ կարող է և օրէնքներ տալ, որոնք գործւում են լանուն Մալիսեան ժողովի, միայն թէ այդ տեսում է իբր լոկ ակտ մինչ լետագայ Մալիսեան ժողովը, որը եթէ հաստատեց, ապա նոքա մտնում են կանոնաւոր օրէնք-

ների չարքը։ Նա հրամանգներ է տալիս օրէնքների իրագործման համար։ Դաչն է կռուում և օտար լարաբերութիւնների մէջ մտնում. հսկում է վարչութեան կանոնաւոր ընթացքը։ Կազմում է պետական բիւջէն, կոնտրոլ է անում ծախսերը, ստանում է պետական խորհրդի տարեկան զեկուցումները։ Վարում է պատերազմական, ֆինանսական գործերը, հսկում աղքատների հոգաբարձութեան ինչպէս և աշխատանքներին։ Նորա հսկողութեան ներքոյ է գտնւում մի խօսքով կանտոնի սահմանադրական բոլոր իշխանութիւնը։

Բարձր խորհուրդն է ընտրում պետութեանց խորհրդի ներկայացուցիչը (le député au Conseil des Etats) մի տարով։

Նա է նշանակում բոլոր պաշտօնեաներին, բացի նորանցից, որոնց նշանակում է մալիսեան ժողովը։ Բարձր. խորհուրդը ունի չը մոռանալ ասել, նաև ներելու իրաւունք (Droit de grâce)։

Գործադիր իշխանութիւնը, որի անդամները նշանակւում են մալիսեան ժողովում։ Նա բաղկացած է 9 անդամներից, այն է Landամմանը (բարձր խորհրդի նախագահը), փոխ Landդամմանը (փոխ նախագահը նոյն խորհրդի)։ Տեղակալը (Lieutenant-Statthalter), գանձապահ, կանտոնի զօրապետը (capitaine) և հասարակաց աշխատանքի տեսուչը, կանտոնի դրօշակակիրը, աղքատների գանձապահը, (որը պարտաւոր է կանտոնի աղքատներին խնամել) և արսէնալի (զինարանի) տեսուչը։ Պետական խորհրդի պարտաւորութիւններն են. գործադրելի կացնել օրէնքները. վարել ոստիկանութիւնը. վարչութիւնը. համաձայն հաստատուած բիւջէի ծախսերը անել, կազմել մուտքի և ելքի տոմարը և ներկայացնել բարձր խորհրդի հաստատութեան։ Նա է հսկում խնամակալ ներքին (անչափահասների) աշակցութեամբ խորհրդականներին։

Հսկում է եկեղեցական վարչութեան և աղքատներին։ Այդ խորհուրդը հսկում է եկեղեցական դումարների ծախսման։

Չը պէտք է մոռանալ, որ Landդամմանը. որը, ինչպէս տեսնում էք աւելի շատ իրաւունքներ է վայելում, քան դաշնակցութեան նախագահը, չի կարող ընտրւել երրորդ անդամ. եթէ նա երկու տարի շարունակ վարել է այդ պաշտօնը։ Landդամմանի ձեռքին է գտնւում կանտոնի կնիքը։

Ապպէնցելում, ինչպէս և ամբողջ Զուիցերիայում, դատաստանական իշխանութիւնը կազմած է ժամանակով ընտրուած դատաւորներից, այնպէս, որ, դատաստանական մագիստրատուրա ինչպէս առհասարակ հասկանում են, գոյութիւն չունի այստեղ։ Կանտոնը ունի իւր կանտոնական ատեանը, որը բաղկացած է մի նախագահից և 11 անդամներից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը (մալիսեան) և այդ այնպէս, որ գոնէ իւրաքանչիւր վիճակի (District) ունենայ մի անդամ։ Ատեանին մի անդամից պատկանել չեն կարող հայր և որդի. եղբայրներ,

փեսայ և կնոջ հայր։ Անհրաժեշտ է 9 անդամների ներկայութիւնը ատեանը կազմելու համար։ Այդ ատեանը բողոք-ատեան է քաղաքացիական գործերի համար, քննիչ և վճռաջինջ ատեան քրէական չանցանքների համար։

Վարչական տեսակէտից ամբողջ կանտոնը բաժանուած է վեց շրջանների, որոնցից իւրաքանչիւրում կայ մի ատեան, որոնց անդամները ընտրւում են շրջանի ընդհանուր ժողովից։ Նրանք ունին իրանց նախագահը և փոխ-նախագահը։ Շրջանական ատեանի անդամ կարող չեն ընտրուել ոչ վարչական որ ե է պաշտօնեայ և ոչ իսկ կանտոնական ատեանի պաշտօնեաները։ Հայր, որդի, թոռ, եղբայրներ, փեսայ նոյնպէս կարող չեն միանդամից։ Ատեանը ընտրում է միշտ մի մասնախումբ՝ հաշտեցնելու վիճող գործերը և քրէական չանցանքները։ Բացի վերոյիշեալ ատեաններից կան մասնաւոր դատաստաններ երեք կարգի, որոնց իրաւասութեան ենթարկւում է արօտատեղիների, մարդագետինների, անտառների, ճանապարհների, չաւիղների առթիւ ծագած վէճերը։

Առաջին կարգի մասնաւոր ատեանը բաղկանում է շրջանի ատեանի հինգ անդամներից և այն համայնքի անդամներից թւով, ուր գտանւում է վէճի առարկան։

Երկրորդ կարգի ատեանը բաղկանում է 11 անդամներից, որոնց ընտրում են շրջանից, միայն առաջի կարգի ատեանում մասնակցողները ընտրւել չեն կարող։

Վերջապէս, երրորդ կարգը, արդէն կանտոնական ատեանն է կազմում (Tribunal cantonal)։ Գործը սկսւում է միշտ առաջին կարգից, բայց նախքան գործը սկսելը, ատեանը պարտաւոր է միջոցներ գործ դնել հաշտութիւն կայացնելու. իսկ ապա թէ հակառակ դէպքում սկսի քննել։ Ատեանի անդամներից երկուսը պարտաւոր են անձամբ ներկայ դտնւել և վեճի առարկաները տեղում դիտելով, արձանագրութիւն կազմել, լանձնելով ատեանին։

Կանտոնը ունի իւր ուսումնական և եկեղեցական խորհուրդը։ Այդ խորհրդին անդամ կարող են լինել և թէ ընտրել անդամներին, որոնք ընտրողական իրանք ունեն։ Տարեկան մի անգամ կանոնաւորապէս կանտոնի բոլոր շրջանների համայնքների քաղաքացիները հաւաքւելով ընտրում են խորհրդի անդամներին և նշանակում ուսուցիչներին։ Խորհուրդը բաղկացած է լինում առ հասարակ 5—8 անդամներից։ Խորհուրդը ամեն տարի հաշիւ է ներկայացնում ուսումնաբանական ընդհանուր ժողովին։ Ուսումը տարրական ձրի է և պարտադիր։ Ուսումնարանները պահպանւում են համայնքների [1]) հաշւով, իսկ տէրութիւնը (կանտոնը) նպաստում է։

---

[1]) Մուրալ չը դիտեն։

Ռամկական միւս կանտոններում վարչական մեքենան աւելի կամ պակաս բարդէ։

Վերին Ունդէրվալդէնում, բացի մալիսեան ժողովից, բարձր խորհրդից և գործադիր խորհրդից կայ և երկրորդ մի խորհուրդ, որը բաղկանում է բարձր խորհրդի և գործադիր խորհրդի անդամներից ու ժողովրդից ընտրուած այլ ներկայացուցիչներից համեմատ ժողովրդի թւին (125 հոգուն մի ներկայացուցիչ)։ Երրորդ խորհուրդը օրէնքները բացատրող դէր է կատարում և պատրաստում է պրոէկտները։ Իսկ բարձր խորհուրդը իսկապէս մի բարձր պաշտօնական կարանէ, եթէ կարելի է ասել։ Այդ խորհուրդը (բարձրագոյն) բաղկանում է գործադիր խորհրդի անդամներից (որոնք թւով 11 հոգի են և նշանակւում են Մալիսեան ժողովից) և ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներից (260 հոգուն մի ներկայացուցիչ)։

Ստորին Ունտէրվալդէնում, օրինակ, չը կայ երեք խորհուրդ, բայց ունեն Մալիսեան երկու ժողով, մէկը ընտրելու համար, իսկ միւսը օրէնսդրութեան համար է։

Յառաջ եմ բերում դիտմամբ մի քանի խօսք այդ կանտոնի դատաստանական կազմակերպութեան առթիւ։ Նա հետեւեալ կազմութիւնը ունի, 1-ն, քրէական բարձրագոյն ատեան, որը միակ կարող է մահուան վճիռ կայացնել և վճռել այլ ծանր յանցանքները։ Մահուան դատավճռի համար անհրաժեշտ է ձայների $^3/_4$-ը։ Այդ ատեանը բաղկանում է բարձր խորհրդի բոլոր անդամներից և երդուեալների ատեանի բոլոր 11 երդուեալներից։ 2-րդ երդուեալների ատեան, որը քաղաքացիական բարձր ատեանն է (tribunal civil) և անբողոք ատեանը թեթև յանցանքների համար։ 3-րդ, ոստիկանական ատեան, որի իրաւասութիւնը տարածւում է լոկ թեթև յանցանքների վերայ։ 4-դր Նօթի ասած ատեանը, քաղաքացիական երկրորդ ինստանցիան է. դորա իրաւասութիւնը 50 ֆրանկից չի անցնում։ Քաղաքացիական վէճերի առաջին ինստանցիան հաշտարար ատեանն է։

Ամուսնութեան գործերի համար առանձին դատարան կայ, որը քննում է ծխական խորհրդների դէմ տւած գանգատները ամուսնութեան մերժելուն և այլ նման հարցերի վերաբերեալ խնդիրներ։

Փոքրիկ Ուրին, ընդամենը ունի 24,000 բնակիչ. իսկ աւելի փոքրիկ Ունտերվալդէնը, այն որ 1889 թ. ժողովրդին ազատեց բոլոր հարկերից, ունի միմիայն 11,000 բնակիչ։ Եւ Ունտէրվալդէնը, Ուրին մի մի անկախ տէրութիւններեն. դրանք էլ ունեն իրանց բարձրագոյն իշխանութիւնը (մալիսեան ժողովը). ինչպէս և ներկայացուցչական մի քանի իշխանութիւններ—օրէնսդրական խորհուրդ (Landrath). գործադիր խորհուրդ և վարչական մի մասնաժողով (Ուրիում). ունեն իրանց ուսումնարանական

և եկեղեցական խորհուրդները, կանոնական բարձրագոյն ատեանը (քրէական և քաղաքացիական վէճերի համար) և թէ այլ փոքրիկ դատարաններ։ Նրանք էլ են դաշն կռուում հարեան պետութիւնների հետ, որքան այդ թոյլ է տալիս դաշնակցական սահմանադրութիւնը։ Վերջապէս ունեն իրանց զինուորական վարչութիւնը և այլն. կարճն ասած, իւրաքանչիւրը առանձին առած, մի անկախ պետութիւն են ներկայացնում իւր ամբողջ կազմակերպութիւնով։ Այդ դեռ ոչինչ, եթէ նկատեցիք, լարդոլ ընթերցող։ Զուիցերական իւրաքանչիւր մի համայնքը, որը շատ անդամ բաղկացած է լինում մի քանի տներից, այդ քաղաքական միկրոսկոպիկական ատոմիկը իսկ, առանձին մի անկախ վարչութիւն է, մի ամբողջ օրգանիզմ։

Ես վերը մի տեղ լիշեցի, որ իսկապէս ասած չը կայ, ոչ կանտոնի և ոչ Դաշնակցութեան քաղաքացի, այլ կան համայնքի քաղաքացիք։ Եւ արդարև, զուիցերական համայնքը այն օղակնէ, որի վրայ շրջում է երկրի քաղաքական բարդ մեքենան, ամբողջ կազմութիւնը։ Համայնքը, թէ կարելի է ասել, երկրի օրգանական մասնիկն է, իսկ շրջանը, կանտոնը արհեստական, վարչական բաժանմունքներեն։

Դա ևս, համայնքը, մի անկախ ամբողջութիւն է կազմում։ Դա էլ ունի իւր ընդհանուր համայնական ժողովը, համայնական խորհուրդը, իւր ընտրուած դատաւորները։ Նա՝ համայնքը, ինքը կազմում է իւր բիւջէն, պահպանում իւր ուսումնարանները, եկեղեցիները անկախօրէն։ Կանտոնը, իւր մասը չի խառնում և ոչ իսկ կենդրոնական իշխանութիւնը, նորա՝ համայնքի՝ առտնին գործերի մէջ։ Կենդրոնական վարչութիւնը խնամակալի դեր չի կատարում, այլ շատ շատ հսկում է և գլխաւորապէս իւր ուշքը կենդրոնացրել է «համայնական հողերի պահպանութեան վերայ և հոգում է, որպէս զի այդ հողերը չը կորցնեն իրանց նշանակութիւնը։

Թէ ինչ նշանակութիւն ունի և ինչ դեր է խաղում համայնքը, այդ կարող էք եզրակացնել, նրանից, որ ով անդամ չէ մի համայնքի, ապա քաղաքացիութեան իրաւունք չունի։ Քաղաքացի է նա, ով անդամ է որևէ մի համայնքի և նա միմիայն ընտրել և ընտրելու իրաւունք ունի. իսկ ընտրողական իրաւունք ունենալով համայնքում, այդ ընդարձակւում է կանտոնի դաշնակցութեան վերաբերութեամբ, որով կանտոնը, այդ համայնքների դաշնակցութիւնն է. իսկ դաշնակից պետութիւնը—կանտոնների հիմնաքարը՝ համայնքն է։

Իսկ դիտէք, լարդելի ընթերցող, ինչու զուիցերացիք, ինչպէս ասում են այդքան զլուխ են ծակում, դողդոջում իրանց համայնական ծագումի, համայնքի իրաւունքների համար։ Դիտէք ինչու է դաշնակցական սահմանադրութիւնը ամենախստիւ արգելում՝ քաղաքացիութեան իրաւունքից որևիցէ մէկին զրկելը և թէ արգելում

աւելի խստիւ ղրկել մէկին իւր ծագման իրաւունքից (Droit d'origin) և կամ արտաքսելը ծննդավայրից, ինչու ամենախստիւ կերպով հսկում է, չ'իցէ թէ այս կամ այն կանոնը խախտէ սահմանադրութեան այդ յօդուածը։ Ո՞չ։ Իսկ գուցէ թէ Ձեզ յայտնի է տնտեսական հարցերից յառաջացած այն իրարանցումը, որը տիրում է Եւրոպայում։ Լսած կաք, թերևս, ինչ ահագին աղմուկ է հանել հողային հարցը և մարդկութեան մի նոր դասակարգը՝ աղատ ստրուկների դասակարգը, որոնց պրոլէտարիատ են ասում, որը այսօր կամ վաղը տակն ու վրայ պէտք է անէ Եւրոպան։

Գիտնականների հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ համայնքը տնտեսական ծագում ունի. նորա հիմնաքարը հողատիրութեան հաւաքական եղանակն է, այն է հողատիրութեան սկզբնական եղանակը, որից ժամանակի ընթացքում մի շարք փոփոխութիւններից յետոյ յառաջացել է հողի անձնական սեպհականութիւնը։ Այդ այժմ ուսումնականների մի շարք հետազոտութիւններով հաստատած է դրականապէս։

Հաւաքական (կոլեկտիւ) հողատիրութեան ձևի հետքերը մինչև այժմ էլ մնացել են Եւրոպայի թէ Ասիայի ու Հնդկաստանի մի քանի ցեղերի մէջ—Հնդկական մի քանի ցեղերում, գերմանական և սլաւոնական ցեղերում, ինչպէս և Զիւցերիայում է արդի համայնքը և թէ արաբական ցեղերի մէջ։

Առհասարակ ընդունում են, որ համայնքը մի քանի ընտանիքների միաբանութիւններ են, որոնք ծագումով կամ այլ հանգամանքներով միացած բռնում էին որ և իցէ մի հող, որի մի մասի վրայ կառուցանում էին տներ բնակելու. իսկ հողի մնացած մասը, ինչպէս մշակութեան հողը, արոտատեղիները, մարգերը, անտառները և այլ անշարժ կալքերը, անբաժան սեպհականութիւն էին ամբողջ համայնքին միասին առած։ Այդ անբաժան հողը, որի վրայ համայնքի անդամներն էլ հաւասար իրաւունքներով տիրում են, կոչւում էր համայնական (communaux)։ Ընդունում են, որ համայնական հողատիրութեան նախնական եղանակում, նոյն իսկը ամբողջ համայնքը ի միասին մշակում էր և աշխատում նոյն հողը և թէ ժամանակի ընթացքում միմիայն իրաքանչիւր ընտանիքին առանձին բաժին էր տրւում, որի վրայ աշխատում էին ամբողջ ընտանիքի աշխատող ձեռները։ Առհասարակ այդ բաժանումը տեղի էր ունենում զանազան ձևով. կամ վիճակով և կամ նայած ընտանիքի մեծութեան կամ փոքրութեան, այն է, եթէ մի ընտանիքում աւելի թուով անդամներ կային, ապա այդ ընտանիքը ստանում էր աւելի մեծ կտոր հող. իսկ աւելի փոքր թուով անդամներից բաղկացած ընտանիքի բաժինը աւելի փոքր կտոր էր լինում։ Պատահեց, որ ընտանիքում մէկը վախճանուեց, ապա նորա մասը յետ էր գնում և խառնւում համայքի հողին և կամ տրւում էր մի այլ ընտանիքի, ուր կարիք կայ։

Շատ ցեղերի մէջ նոյն իսկ (տեւտոնականը օրինակ) ամբողջ համայնքի ընտանիքները ցանում էին միեւնոյն սերմը և նոյնքան հանգստութեան թողնում արդէն ցանած հողերը։ Աւելի ուշ, արդէն իւրաքանչիւր ընտանիքի բաժինը մնում է մշտականապէս ընտանիքի բոլոր անդամներին, այլ ևս չէ բաժանւում ինչպէս առաջ։ Այդ արդէն ընդհանուր համայնական հողատիրութիւնից դէպ մասնաւոր սեպհականութիւնը առաջին քայլն է, ասում է, պրոֆեսսոր Մէնը, երբ ընտանիքի անդամները միասին տիրում են մշտականապէս և անբաժանելի իրանց բարնին։ Ինչ և իցէ, այստեղ աւելորդ եմ համարում պատմել հողի համայնական տիրապետութիւնից դէպի մասնաւոր սեպհականութիւնը տանող պրոցէսսը [1]). այդ մի կողմը թողած, յառաջ կը բերեմ համայնական հողատիրութեան և մասնաւոր սեպհականութեան (հողի) գլխաւոր տարբերութիւնը, որը արժանի է խորին ուշադրութեան։

Արդի քաղաքացիական օրէնքները, գրեթէ բոլորն էլ անմիջապէս կամ միջնորդաբար իւրացրել են այն հասկացողութիւնը, ինչ տալիս էր հռովմէական օրէնքը սեպհականութեան։ «Սեպհականութիւնը. այդ որ և իցէ մի իրի վրայ ամենաանպայման և ընդարձակ իրաւունքն է, որ մարդ կարող է ունենալ» բացատրում է հռովմէական օրէնքը. գրեթէ նոյն բացատրութիւնն է տալիս «որ և իցէ մի առարկայի ամենաանպայման և անկախ գործածութիւնը»։

Համայնական հողատիրութեան գլխաւոր սկզբունքը ասացինք, որ կայանում էր նրանում, որ հողը սեփականութիւն չէր, անպայման և անկախ գործադրելի սեփականութիւն այս կամ այն անհատին և ոչ տիրապետութիւն էր (possession) այս կամ այն ընտանիքին, այլ ամբողջ համայնքի բոլոր անդամներն ևս հաւասար իրաւունքներ էին վայելում ամբողջ համայնական հողի վերաբերութեամբ։ Հողը սեփականութիւն էր այսպէս ասած ամբողջին. իսկ իւրաքանչիւրը առանձին առած և ոչ մի աւելի կամ պակաս արտօնութիւն չունէր միւսից։ Համայնքի այս կամ այն անդամը կարող չէր նոյն իսկ մի մասնաչափ անգամ գործ ածել ինչպէս իւր սեփականութիւնը, ուրեմն այնպիսի անպայման և անկախ գործածութիւնը գոյութիւն չունէր համայնական հողատիրութեան [2]) ժամանակ. համայնքի իւրաքանչիւր անդամը տէր էր և ոչ թէ նորա սեփականութիւնն էր հողը։ Նա տէր էր

---

[1]) Լէտուռնօ և այլք։

[2]) Հողատիրութիւն գործ եմ ածում possession բառի մաքով, որը չը պէտք է շփոթել սեփականութիւն (propriété) բառի հետ, որոնք շատ տարբեր են իրարից։

[3]) Պէտք է ի նկատի առնել որ Զուիցերիայում մի կտոր հող չէք գտնել, որ անօգուտ թողնեն։ Այդ լեռները իսկ քիչ եկամուտ չեն բերում, որոնց վրայ

ինչպէս և միւսները. իսկ սեփականատէր չէր կարող լինել, այսինքն թէ մէկը սեփականատէրերից ցանկանայ կարող չէ ամբողջի սեփականութիւնը գործադրել իւր ցանկութեան համաձայն. իսկ համատէրութեան ժամանակ առաւել ևս. նա ոչ ծախել, ոչ պարգևել և ոչ կտակել կարող է հողի այն կտորը, որը համայնքը որոշել է նրան օգտուելու. եթէ նա հրաժարւում է օգտուելուց, թողնում է իւր բաժինը, ապա այդ բաժինը անցնում է համայնական հողին և կամ համայնքը տալիս է մի այլ ընտանիքի կամ անդամի, որը կարիք ունի.

Այս մի քանի տողերից, ընթերցող, ակներև երևում է, որ համայնքում, ընտանիքի իւրաքանչիւր անդամը արդէն ապահով վիճակի մէջ է գտնւում. Համայնքի անդամը հասնելով աշխատելու հասակին, արդէն նորա համար հողը պատրաստ է, որի վրայ աշխատելով, իւր աշխատանքի արդիւնքը վայելում է ամբողջովին ինքը. Նման հանգամանքում, երբ համայնքը հոգում է իւր անդամներից իւրաքանչիւրին հող տալով, երբ այդ հողը կարող չէ մէկի կամ միւսի սեփականութիւնը լինել, ապա շատ պարզ է, որ երկնքից իջած մի քանի բաղդաւորներ կարող չեն սեփականել իրանց ոչ բնութեան այդ տուրքը՝ հողը, որի վրայ և ոչ ոք աւելի կամ պակաս իրաւունք չը պէտք է ունենայ միւսներից, ինչպէս ջրի, օդի, լոյսի վրայ չունի և բացի այդ՝ միւսն էլ չի զրկւիլ այդ տուրքից.

Համայնական հողատիրութեան ներքոյ համայնքի անդամը մի կտոր հացից զրկուած չէ.

Ահա ընթերցող այն շարժառիթները, որոնք ստիպում են շուէյցարական դաշնակցութիւնը ամենախստիւ հսկելու չ'իցէ թէ խախտուի այն յօդուածը դաշնակից սահմանադրութեան, որով արգելւում է կանտոններին որևիցէ մի զւիցերացու զրկել քաղաքացիութեան իրաւունքից, այն է համայնքի անդամ լինելուց և թէ ինչու իւր ուշքը կենդրոնացրել է համայնական հողերի վերայ, չ'իցէ թէ նրանք կորցնեն իրանց նշանակութիւնը.

Այժմ կարծեմ մասամբ պարզ է, ինչու Զւիցերիան գլուխ է ծակում իւր քաղաքացիութեան իրաւունքով, ինչու նա դողդողում է համայնքի անդամ լինելու իրաւունքի վրայ և ինչու կապիտալը այն հրէշաւոր տեղը չ'ունի, ինչ այլ երկիրներում, ինչու չը կայ այն դառն աղքատութիւնը, ինչ Անգլիայում. Այլ խօսքով ինչու ամբոխը ստրուկ չէ մի քանի Լանդ-լորդերի կամ կապիտալիստ բուրժուաներին և ինչն է պատճառը, որ զւիցերացին վայելում է քաղաքական ազատու-

---

ահագին հիւրանոցներ են կառուցուած, ուր իրանց ժամերը, պարապ սարապ ժամերը, անց են կացնում երկրագնդիս երեսին գտնուած բաղդաւորները, մի քանի օրերում հազարներ թողնում.

թիւնը։ Որ և իցէ մի Ուրի կանտոնի, որ և իցէ մի համայնքի պիւ-
ղացին, ինչպէս ասում են, գտակը ծուռ դրած, ձեռքերն էլ մէջքին, մալի-
սեան ժողովում անկախ, ազատ առանց վաղուան հացի վրայ մտածելու
օգտւում է իւր իրաւունքներից. ընտրում է ում արժանաւոր է դատում
ու տալիս այն օրէնքները, որ նա ցանկանում է։

Ասել չէ հարկաւոր, որ մասնաւոր սեպհականութիւն գոյութիւն
ունի Զուիցերիայում. բայց մի բան կայ այստեղ ուշադրութեան առնե-
լու. արօտատեղիները, մարգերը, անտառները, առանց բացառու-
թեան, համայնական սեպհականութիւն են, ինչպէս և լեռները և այլ
նման հողերը. և այդ հետքերը ամեն կերպ աշխատում են պա հ-
պանել։

Չեմ ասում, որ այստեղ չը կան հող չ'ունեցող քաղաքացիներ։ Կան։
Իսկապէս ասած այժմ չէլցարական համայնքներում երեք տեսակ անդամ-
ներ կան. նոքա որոնք հող և տուն ունեն, որոնք տուն ունեն իսկ հող
ոչ, և երրորդը, որոնք ոչ այդ ունեն, ոչ ալն, ուրեմն ոչինչ չ'ունին։
Սակայն այս վերջին խօսքը շատ էլ ճիշդ չէ։ Սխալ կը լինի, թէ ասենք ոչինչ
չ'ունին։ Նախ փոքրամասնութիւն են կազմում վերջիններս և բացի այդ՝
նրանք ես զուրկ չեն ոտացւածքից։ Համայնքի քաղաքացիք լինելով, հա-
ւասար իրաւունքներ են վայելում համայնական ստացւածքների վերայ։
Բոլորեքեան ես անխտիր։ Իսկ ամեն մի համայնք ունի իւր անշարժ
ստացւածքները, որոնք են—տներ, հողեր, անտառներ, արօտատեղի-
ներ (բացի մասնաւոր սեպհականութիւնից), լեռներ, որոնց եկա-
մուտը համահաւասար բաժանւում է անխտիր համայնքի բոլոր անդամների մէջ։ Այդ կալքերը տրւում են կապալով և դոցա եկամուտը փողով կամ բնութեան տուրքով պատկանում է բոլոր անդամներին։ Կան համայնքներ, ուր իւրաքանչիւր անդամը տարեկան 4—700 ֆրանկ եկամուտ ունէ համայնական ստացւածքներից։ Ուրեմն չը պէտք է կարծել, որ համայնքի անդամը, երբ ասացի, չ'ունէ ոչ այս ոչ այն, բոլորովին զուրկ է օրական պարենից։ Նա մասնաւոր սեպհակա-նութիւն չ'ունի. սակայն համայնական ունի և այդպիսի մի հանդամանքում չատ ակներևէ որ կապիտալը իւր ծիլերը չի կարող այս կամ այն խմբի կամ անհատի ձեռքում կենդրոնացնել, մանաւանդ, երբ համայնքի իւրաքանչիւր անդամը անձամբ կերարկում է իւր գերիշխանութիւնը, մասնակցելով օրէնսդրական իշխանութեան. ուրեմն այստեղ և ոչ իսկ այս տեսակ հրէշաւոր հարկեր կարող են գոյութիւն ունենալ, որոնք կարողանան կլանել եկամուտը։

Ով եղել է Զուիցերիայում, ապա անշուշտ գիտէ. եթէ հետաքրքրւել է ծանօթանալ, որ գիւղացին ամբողջ ամառը աշխատում է դաշտում. իսկ ձմռան, ազատ ժամերը դործադրում է անալին արդիւնաբերութիւնով և այն էլ չատ կատարելագործած արդիւնաբերութիւնով և կամ քաղաք գնալով

աշխատում է մի քանի ամիսների ընթացքում իր ազատ աշխատանքը արդիւնաբերում մինչ ամառ, ապա կրկին դիմում իւր սիրած հողին կամ այլ գիւղական աշխատութեան։ Նա իւր աշխատանքի տէրն է, ահա ինչու վայելում է օրէնքի և արդարութեան տեսակէտից հաւասար իրաւունքներ. իսկ այդ աշխատանքի արդիւնքը իրան է պատկանում, որովհետև նա՝ բոլորովին զուրկ չէ եկամուտից—անկախ դիրք ունի։

Այն հեղինակները որոնցից օգտուել եմ։

Hesse—L'administration provinciale et communale en France et en Europe, 1870.

Ch. Letourneau.—La sociologie, 1880.

Laveley.—Les formes primitives de la proprieté.

V. Maurer.—*Համայնական վարչութեան պատմութիւնը։*

P. Viollet.—De lapropriété collcetive (Rev. de deux mondes).

Բլունչլիի և Էլիզէ Ռէկլիւի գրուածքները։

Մէն.—Նախնական համայնքները Արևելքում և Արևմուտքում։

Բացի այդ՝ օգտուել եմ պրոֆէսսոր Gentet *ի դասախօսութիւններից* 1886/7 *թւականի սեմեստրին կարդացած։*